№ 99 Յունիսի 3 (15) 1881 Յունիսի 3 (15) № 99

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են այդպէս
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչպէս ուսումնասիրենք:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Էջմիածին և իր ստորագրեալները: Նամակ Մեծ-Ղարաքլիսից: Նամակ Սղնախից: Նամակ Բագուից: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ֆրանսիա: Անգլիա: Գերմանիա: Աւստրո-Ունգարիա: Իտալիա: Արտաքին լուրեր:— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԻՆՉՊԷՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՆՔ

Մեր թղթակիցը Ստրասբուրգից, պ. Ա. Արասխանեանց այն ուղիղ միտք էր յայտնում նորերումս իր յօդուածի մէջ, որ նախ քան առաջարկենք Թիւրքաց Հայաստանին այս կամ այն տնտեսական կամ հասարակական վերանորոգութիւն, պէտք է ուսումնասիրենք երկիրը, յատկապէս դրա համար մարդիկ ուղարկելով Թիւրքաց Հայաստանը, որոնք հետզհետէ քննելով, ուսումնասիրելով երկրի դրութիւնը, հաւաքելով վիճակագրական և այլ տեղեկութիւններ, գիտելով ազգաբնակութեան պահանջները,— այդ բոլորի հետ կը ծանօթացնեն մեզ և մենք միայն այն ժամանակ կը կարողանանք, ճիշդ տեղեկութիւնների վրա հիմնվելով կազմել մի ընդհանուր գաղափար մեզ դեռ անծանօթ երկրի մասին, կազմել մի ընդհանուր տեսութիւն թէ ի՞նչ է հարկաւոր երկրին և ինչ միջոցներ գործ դնենք որ իրագործենք այս կամ այն տնտեսական բարելաւութիւն երկրի մէջ:

Ահա մօտաւորապէս այն միտքը, որ յայտնում է մեր աշխատակիցը. և ճշմարիտ որ և է երկրին օգուտ բերելու համար ուրիշ ճանապարհ չը կայ, բացի այդ ճանապարհից, որ հիմնված է ճիշդ գիտութիւնների սիստեմայի վրա:

Եթէ կամենում էք օգուտ տալ մի երկրին, նախ և առաջ ճիշդ կերպով ուսումնասիրեցէք այդ երկիրը,— դա անհերքելի ճշմարտութիւն է:

Բայց ինչպէս անենք, որ այդ ուսումնասիրութեան գործով գրաւենք մեր ինտելիգենցիային, որ դէպի ամեն բան անտարբեր է:

Արդեօք թէ Կ. Պօլսի և թէ Թիֆլիսի ինտելիգենցիան կը կազմի մի դրամագլուխ, կուղարկի այդ հաւաքած դրամով մի երկու, երեք մարդ Թիւրքաց Հայաստանը ուսումնասիրելու համար:

Չենք կարծում, որ մեր ինտելիգենցիան այդ կանի, քանի որ տեսնում ենք նրա կատարեալ անտարբերութիւնը, երբ մի մարդ, որ նրա միջոցներով ուղարկված չէր, վերադառնում է Թիւրքաց Հայաստանում արած ճանապարհորդութենից, որտեղ նա հազար ու մի նեղութիւններ է քաշել, խղճմտաւոր կերպով ժողովել է երկրի մասին հարուստ տեղեկութիւններ,— և ահա այդ մարդու հրապարակախօսութեանը մեր ինտելիգենցիայից գրեթէ ոչ ոք ներկայ չէ գտնվում:

Ահա ձեզ մի միջոց ձեզ համար անծանօթ մի երկիր ուսումնասիրելու համար, մի երկիր, որի վրա դուք բարոյապէս ներգործել էք կամենում.... Թովմասեան լինի դա, թէ ուրիշը, գնացել է Վանի նահանգ, հազար նեղութիւններ է քաշել, ուսումնասիրել է երկիրը, որքան իր մտաւոր և բարոյական ոյժերը ներում էին, հաւաքել է թւանշաններ, հաւաքել է տեղեկութիւններ,— բայց դարձեալ շատ քիչ ժողովուրդ է եկել լսելու թէ ի՞նչ կը պատմէ նա մեզ.... Ուրիշ ի՞նչպէս կարելի է ուսումնասիրել մի անծանօթ երկիր....

Բայց մեր հասարակութիւնը, մանաւանդ մեր ինտելիգենցիան նախապաշարմունքներ ունի. Թովմասեան բարձրագոյն ուսում ստացած մարդ չէ, նա արհեստաւոր մարդ է, նա ի՞նչ կարող է իմանալ, երևի ասում էին մեր ինտելիգենցիայի պատկանողները, որոնք կամ բոլորովին չեկան, կամ որոնցից մի քանիսները թէև ներկայ գտնվեցան, բայց դասախօսութիւնը չը վերջացած, դուրս եկան դահլիճից:

Ասենք թէ Թովմասեան մի ինքնուս, արհեստաւոր, բարձր ուսում չը ստացած մարդ է, ասենք թէ նա իր դասախօսութեան մէջ չունէր մի խիստ սիստեմա, որ կարելի էր պահանջել մի համալսարանական մարդուց, ասենք թէ նրա ոճը շատ ծաղկած չէր,—բայց խօ չէք կարող ուրանալ, որ նա եղել է, ճանապարհորդել է այն երկրում, որտեղ դուք չէք եղել, չարչարվել, հաւաքել է տեղեկութիւններ, և պատմում է ձեզ, գուցէ ձեր հասկացողութեամբ անկապ կերպով, այնու ամենայնիւ այն ինչ որ դուք չը գիտէք:

Ասենք թէ նա մի հասարակ ճանապարհորդ է, մի արհեստաւոր, մի վաճառական է, որ գնացել է այն երկիրը, որտեղ մեզանից ոչ ոք չէ եղել, ասենք վերջապէս որ նա Վասպուրականի կողմերից եկած մի մշակ մարդ է, որ պատմում է մեզ այն, ինչ որ ինքն գիտէ.... Այնու ամենայնիւ մեզ համար դա նոր պէտք է լինի, որովհետև ինչ որ նա գիտէ, մեզ ծանօթ չէ....

Բայց այնու ամենայնիւ դահլիճը գրեթէ դատարկ էր.... Իսկ ուրիշ ի՞նչ կերպ կարելի է ուսումնասիրել մի երկիր:

Եթէ մենք ձանձրալի և աւելորդ ենք համարում լսել Թիւրքաց Հայաստանի մասին մի ականատեսի պատմածները, նշանակում է որ մեր հետաքրքրութիւնը դէպի Թիւրքաց Հայաստանը սուտ է, կեղծ է:

Վերջապէս դասախօսութեան ձեր կողմից անգամ, պնդում ենք որ Թովմասեանը աւելի լաւ խօսեց, քան թէ կարող են խօսել մեր համալսարանականների մեծ մասը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷՋՄԻԱԾԻՆԸ ԵՒ ԻՐ ՍՏՈՐԱԳՐԵԱԼՆԵՐԸ

Երբ մի որ և է անձը բողոքում է Էջմիածնի կամայականութեան դէմ, թէ անգութ կերպով ճնշում է նա իր ստորագրեալներին և պաշտպան է հանդիսանում նորանից տանջված անմեղ արարածներին, իսկոյն երևում են խաւարասէր անձինք, որոնք փաստաբաններ են հանդիսանում և պաշտպանում են Էջմիածնի կամայականութիւնը, ասելով թէ Էջմիածինը ոչ մի գործում մեղաւոր չէ, թէ նա այդպիսի բաներ երբէք չէ գործել, այլ բոլորը զրպարտութիւններ են և հնարված են նորա թշնամիներից: Այսպիսով քողարկում են ճշմարտութիւնը և միամիտ հասարակութեանը գրգռում են դէպի այն անձը, որը քննադատում է Էջմիածնի անգործունէութիւնը և կամայականութիւնը, իբրև թէ սուտ և զրպարտանք:

Այժմ պարտաւորութիւն եմ համարում մի քանի օրինակներ բերել Էջմիածնի կամայականութեան և բողոքել նորա դէմ (միայն իր ստորագրեալների վերաբերութեամբ), իբրև մի նուաստ պաշտպան այն անմեղ արարածների, որոնք ենթարկված են Էջմիածնի կամայականութեան, և կը խնդրեմ Էջմիածնի փաստաբաններին, որ նոքա իմ ամեն մի հարցմունքիս ճշգութեամբ և խղճմտանքով պատասխան տան: Թողնենք բազմաթիւ օրինակները և յիշենք միայն աւելի ո՛չ շատ հները, որոնք շատ լաւ յիշում են ամենքը:

Վախճանվեցաւ Աբէլ արք-եպիսկոպոսը (Մխիթարեան), Էջմիածնի միաբանութեան մէջ այդ քանքարաւոր աշխատասիրողը, և հրամայեց Մանկունին որ նորան թաղեն ոչ թէ միայն առանց իր աստիճանին պատկանեալ եկեղեցական հանդերձի, այլ և մինչև անգամ առանց քահանայի, միայն մշակներով: Յիշում էք. ի՞նչ էր պատճառը մեծ. փաստաբաններ, խղճմտանքով պատասխանեցէք:

Վախճանվեցաւ Յովհաննէս Այվազեան արքեպիսկոպոսը, նորա անշունչ դիակի հետ վարվեցան նոյն ձևով: Յիշում էք. ի՞նչ էր պատճառը:

Դիարբէքիրի (Տիգրանակերտ) առաջնորդ Փիլիպպոս արքեպիսկոպոսը եկաւ Էջմիածին կաթուղիկոսի հետ խօսելու կարևոր բաների վերաբերութեամբ, և Մանկունին փիլոնը վրէն պատառոտելով, տարաւ և բանտարկեց մի դժոխային սենեակում: Յիշում էք. ի՞նչ էր պատճառը:

Չանցաւ ժամանակ և Էջմիածինը հրամայեց, որ Երևանի առաջնորդ ծերունի Եղիազար արքեպիսկոպոսից առնվի արքութեան տիտղոսը և աքսորվի Գեղարդայ վանքը, առանց հարցնելու նորա ոչ ծերութիւնը և ոչ տկարութիւնը: Յիշում էք. ի՞նչ էր պատճառը:

Իսկ Թիֆլիսում մի ինչ որ Մամբրէի հրամանով, Սուրբ Սարգիս եկեղեցու նորընծայ քահանայ տէր-Կոստանդին Արարատեանցը թողնելով իր ընտանիքը անպաշտպան, աքսորվեցաւ Խերէթի Չխար կոչված մի խուլ տեղում, ուր ամբողջ վեց ամիսներ տանջվելով գտաւ պանդխտութեան մէջ, նորերումս հազիւ վերադարձաւ իր տեղը: Յիշում էք. ինչ էր պատճառը:

Եւ ահա այժմ Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցու Յովհաննէս աւագ քահանայ Սարգսեանը, դեռ մի քանի ամիս սորանից առաջ արգելվեցաւ քահանայութենից, և երկար բողոքներից յետոյ, այժմ Էջմիածինը հրամայել է, որ յիշեալ քահանայից առնվի աւագութիւնը և համարվի հասարակ քահանայ, բոլորովին ոտնակոխ անելով սորա բազմամեայ ծառայութիւնները իր ազգին և եկեղեցուն: Յիշում էք. ի՞նչ էր պատճառը:

Ամբողջ Թիֆլիսի բազմաթիւ հայ-քահանաների մէջ միայն մէկը կայ (մենք անձամբ լաւ ճանաչում ենք), որը կարողացաւ և կարող է իր անվեհեր ինքնաճանաչութեամբ դիմադրել հոգևոր իշխանութեան կամայականութեան: Դա քարափի եկեղեցու Յովհաննէս քահանան է, և չը նայելով որ տեղւոյս հայ քահանաների մէջ մի աննշան տեղ է բռնում, բայց կարողացաւ իր ճշմարտութեամբ մի այնպիսի գործ բռնել Թիֆլիսի երբեմն առաջնորդ Մակար արքեպիսկոպոսի գլխին, որ ամբողջ հոգևորականութիւնը զարմանքով պաշարեց, և այնուհետև Մակար սրբազանը արժան համարեց, գրեթէ ահով, յիշեալ քահանայի հետ վարվել ըստ օրինաց, և ոչ իբրև բռնակալ իշխան: Այս դէպքը լաւ յիշում են դեռ ևս Թիֆլիսի հայ հոգևորականները:

Մենք, Էջմիածնի այս գործածների պատճառները շատ լաւ գիտենք, միայն առայժմս թողնում ենք, որ Էջմիածնի փաստաբանները իրանք պատասխանեն իրանց կարծած պատճառները, իսկ եթէ նոքա ուղիղ չը գիտեն, և կը ցանկան, մենք միւս անգամ կը բացատրենք մանրամասնաբար մեր գիտցածները: Եւ այսպիսի անթիւ օրինակներից ո՞ր մէկը նկարագրենք: Էջմիածնի փաստաբանները, դարձեալ կը բացականչեն „Էջմիածինը մեղաւոր չէ, փաստեր բերեցէք, փաստեր“:

Մենք այստեղ բաւականացանք միայն մի քանի փաստեր առաջ բերելով, իսկ աւելի ընդարձակ և մանրամասն տեղեկութիւնները Էջմիածնի գործունէութեան մասին, ընթերցողը կարող է տեսնել մեր հեղինակութեամբ յօրինված „Հայաստանի սովը և Էջմիածինը“ վերնագրով գրքոյկի մէջ, որը մտադիր ենք (եթէ յաջողվի) շուտով լոյս ընծայել, և որի մէջ կը մերկանայ Էջմիածնի խարդախ և անկանոն կառավարութիւնը...

Կռունս

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍԻՑ

Մայիսի 17

Ամսոյս 16-ին տեղի ունեցած կարկտախառն առատ անձրևի ժամանակ, մեր գիւղի ծխական դպրոցի բոլոր դասատներում գոյացել են լճակներ, գետակներ, առուակներ, կղզիներ և թերակղզիներ. այնպէս որ այդ օրը եթէ աշխարհագրութեան ուսուցիչը դաս ունենար, շատ հեշտ կը լինէր նորա համար աշակերտների հետ պարապելը: Կաթիլքը այնքան սաստիկ է եղել, ինչպէս առատ անձրևը բաց օդում: 400—500 րուբլիով կազմված մատենադարանի գրքերը, որ ուսումնարանի սենեակներից մէկի մէջ է լինում, համարեա բոլորովին փչացած կը լինէին՝ եթէ գրապետը շուտ նկատած չը լինէր այդ. արդեօք այս դէպքի մէջ ում պարտականութեան բացակայութիւնն է։

Ուսումնարանի բացման օրից հոգաբարձուները վճռել են (դուք չը կարծէք թէ արևելեան խնդիրը) ցեխ օրուայ համար ուսումնարանի դըռները ցեխակալներ շինել տալու, որպէս զի ուսումնարանը մաքուր մնալու համար աշակերտները ներս մտնելուս ոտերը մաքրեն։ Ուստի դա մինչև 80 թւի վերջը դեռ ևս հարց էր. 81 թւին յիշեալ գործիքները շինել տուեին. սակայն իր տեղը յարմարացնելու համար, դա ևս տակաւին հարց է մնացած. թող ընթերցողը երևակայի թէ ինչ կը լինի ցեխ օրերը ուսումնարանի դրութիւնը։ Արդեօք երբ պէտք է սթափվեն մեր հոգաբարձուքը իրենց վնասաբեր անշարժութիւնից։

Ամսոյս 10-ին Բօդի գիւղում մի մարդ անձնասպանութիւն է գործում։ Ինչպէս պատմում են, նա վեր է առնում մի պարան, գնում է իրենց գարմանոցը և այնտեղ կախւում։ Սպանուածի հարսը բաղդի բերմամբ գնում է գարմանոցը, յանկարծ տեսնելով կախուածին և չիմանալով նրա ով լինելը, շտապում է տանը ծանուցումն անելու. տանեցիք գալիս են և տեսնում, որ սպանուածը իրենց տան անդամներից է. ականջներից ձգելով. գլխին ջուր ածելով շատ են աշխատում կենդանացնել, բայց իզուր. ոչինչով չեն կարողանում օգնել։

* * *

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

—

Մայիսի 27

Տեղիս հայոց երկսեռ ուսումնարանների հոգաբարձուների ընտրութեան վեց տարին լրացել է։ Հարկաւոր է սրանց փոխել և նորերն ընտրել, բայց սրա վրա ոչոք մտածող չը կայ, մինչդեռ Կաթողիկոսի կոնդակի զօրութեամբ հոգաբարձուների ընտրութիւնը պէտք է երեք տարին մի անգամ լինի։ Դարձնում ենք սրա վրա թեմական վերատեսչի և տեղիս հայ հասարակութեան ուշադրութիւնը։ Երբ որ նոր հոգաբարձուներ կընտրվեն, այն ժամանակ մի քանի խօսք կը նուիրենք հին հոգաբարձուներին։

Այստեղ յաճախ անձրևներ են գալիս։ Արտերը մեծ առատութիւն են խոստանում, բայց թանգութիւնը դեռ ևս շարունակվում է։ Ալիւրի փութը ծախվում է 1 ր. 50 կ.—2 ր., մսի փունտը 10 կ., պանրի փ. 20 կ., իւղի փ. 60 կ. և այլն։ Այս երկարատև թանգութիւնը տեղացիների անհոգութիւնից է։

Վաղուց է Սղնախը քաղաքագլխի կարօտութիւն ունի, բայց սրա վրա ուշադրութիւն դարձնող չը կայ։ Տարից տարի քաղաքիս պարտքը աւելանում է, բայց ժողովուրդը այդ չէ զգում։ Սղնախը շատ մեծ պակասութիւններ ունի, բայց կարծես թէ սղնախեցիները այդ չեն տեսնում։ Խորհուրդ ենք տալիս տեղացիներին, որ մտածեն քաղաքագլխի համար, որով մեծ լաւութիւն արած կը լինեն իրանց քաղաքին։

* * *

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Մայիսի 21-ին

Այսօր ահա կատարվեց Բագուի «Մարդասիրական ընկերութեան» 17-րդ տարեդարձը ընկ. դահլիճում։ Քաղաքիս հայոց եկեղեցում վերջացնելով պատարագը, աւագ քահանայ Բուդաղեանը հրաւիրեց եկեղեցում ներկայ գտնւող ամբողջ ժողովուրդը այցելել ընկ. դահլիճը, որտեղ կատարել միասին այդ օրվայ պատճառով հանգուցեալ Կայսր Աղէքսանդր II-ի համար հոգեհանգիստ, իսկ յետոյ այժմեան Կայսր Ալէքսանդր Ալէքսանդրօվիչի համար մաղթանք։ Ընկերութեան դահլիճը բաւական գեղեցիկ կերպով զարդարված էր։ Իսկոյն աշակերտները և աշակերտուհիները երգեցին մի տխուր երգ, որից յետոյ օրիորդ Վարձելեանը (վարժուհի քաղաքիս երկսեռ դպրոցի), կարդաց մէկ գեղեցիկ ճառ Թագաւոր Կայսր Ալէքսանդր II-ի սպանման առիթով, որ շատ տխուր տպաւորութիւն ունեցաւ ներկայ գտնւող բոլոր հանդիսականների վրա։ Սրանից յետոյ բժիշկ Արամեանց կարդաց մի ճառ դէպի «Մարդասիրական ընկերութեան» տարեդարձը, որից յետոյ ասվեցան ոտանաւորներ, իսկ աշակերտները և աշակերտուհիք միասին երգելով մեծ ուրախութիւն պատճառեցին հանդիսականներին։

Վերջացնելով մեր խօսքը՝ խնդրում ենք օրիորդ Վարձելեանին մեր խորին շնորհակալութիւնն ընդունել, որ նա առաջին անգամ ցոյց տուաւ մեզ իր թանգագին աշխատութիւնը։ Թէպէտ նրա խօսքերը շատերին տխրութիւն պատճառեցին, այնու ամենայնիւ նրա ճարտասանութիւնը և համակրելի ձայնը չափազանց ազդեցութիւն ունեցաւ մեր վրա։

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Երևան, մայիսի 23-ին

«Մշակի» 90 № Երևանից հաղորդում են ձեր ընթերցողներին, որպէս թէ մի 70,000 արժէք ունեցող տուն վաճառվել է 30,000-ի, որի աճուրդից 1,000 րուբլ է ստացել Գ. եպիսկոպոս և եա քաշվելով տունը թողել մի թուրքի, որի պատճառով ևս ստացել է ս. Մանկունւոյ շընորհակալութիւն և մի մատանի։—Շնորհակալութեան և մատանիի մասին ոչինչ յայտնի չէ ինձ, իսկ միւս հանգամանքների մասին, բարոյապէս պարտաւորված եմ համարում ինձ հետևեալն ասելու։

Աճուրդից երկու օր առաջ տաթեացի Գրիգոր եպիսկոպոսը Վ. կաթողիկոսի հրամանաւ մի ժողով կազմեց խորհրդակցելու թէ ինչ կարժէ յիշեալ տունն առանձին՝ և ինչքան՝ իրան կից մի կտոր գետնով։ Ժողովը եղաւ Երևանում, պ. Վարդան Եղիազարեանի տանը, սրա նախագահութեան ներքոյ։—Ժողովը կազմված էր 7 հոգուց, որոց մէկն էլ ես էի։

Ժողովը վճռեց որ աճուրդի ժամանակ առանձին տան համար եպիսկոպոսը գնայ մինչև 30,000 րուբլի. իսկ եթէ տանը կից հողն էլ հետը լինի՝ մինչև 35,000-ը բարձրացնէ։ Տունն առանձին դրվեցաւ աճուրդի, և եպիսկոպոսը ժողովի գնահատութիւնից 700 րուբլի էլ աւելի էր վճարել. այնու ամենայնիւ տունը մնացել էր աւելի տվող մի թուրքի վրա 31,700 րուբլով, եթէ չեմ սխալվում։ Ահա գործի էութիւնը, որի ճշմարտութիւնը բոլորովին աղաւաղել է ձեր պատահական թղթակիցը, գուցէ տան տիրոջ թելադրածին հաւատ ընծայելով։

Մի և նոյն № մէջ «Աբի Հայաթ» ասված առուի մասին հաղորդած լուրն էլ է անհիմն. բայց ցաւում եմ որ այժմ ժամանակս չէ ներում իրողութիւնը գրելու։

Ս. Բէգ-Նազարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մոսկվա, 27 մայիսի

Խնդրեմ մեր այս քանի մի տողերին տեղ տալ ձեր պատուական «Մշակ» լրագրում, որոնք, կարծեմ, հետաքրքրական կը լինեն հայ հասարակութեան համար։ Մեր խօսքը Ս. Շահազիզեանի «Հրապարակախօս ձայն» գրքի տպաւորութեան վրա է, որ այս րոպէիս տիրապետել է փոքրաթիւ Մոսկվայի հայերի սրտին։ Այստեղի ընթերցող հայերը այնպէս յափշտակված են վերև յիշած գրքից, որ ասես թէ մի անասելի ուրախութիւն են գտել։ Հոգեպայծառ ժպիտը շըրթունքին, նրանք միմեանցից հարցնում են. «Հը. կարդացի՞ր «Հրապարակախօս ձայնը», և այնուհետև ամբողջ տողեր ու երեսներ սերտելով, շտապում են գտնել պ. Շահազիզեանին, որ նրա ձեռը մտերմաբար սեղմեն, նրան աջողութիւն ցանկան։ Կան և այնպիսի մարդիկ, որոնք առաջ հայերէն չը կարդալով, այժմ ուրախութեամբ կարդում են նոյն հետաքրքրական գիրքը։ Այս, մեր կարծիքով, մի մխիթարական երևոյթ է։ Եւ յիրաւի մի գիրք, այնքան փոքր և անկաշառ գրչով գրած, այլապէս ևս կարող չէր ներգործել։ Դրդելով ազգի մէջ նոյն իսկ ազգի բարեկամութեան և թշնամութեան խընդիրները. պարզ և համակրելի լեզուով հաղորդելով իր հայրենակիցներին թէ ինչ է նշանակում բուն հասարակութիւն ասած բանը, այլ և այդ բոլորը հաստատելով մեր հին ու նոր և եւրոպական մտաւոր շարժման օրինակներով,—պատուելի հեղինակը մի կողմից դնում է իր ամենաազնիւ լուման ազգային լուսաւորութեան գանձանակի մէջ, միւս կողմից վկայում է իր բարեխիղճ և խորին ուսումնասիրութիւնը մեր գրականութեան։

Չենք կամենում թագցնել որ և մի քանի անձինք կան մեր մէջ, որոնց համար Նալբանդեանցը կամ Նազարեանցը ասել է «հաստագլուխ բաղդասարներ»։ Բայց պ. Շահազիզեանը այնքան երկայնամիտ է, որ կարող է հանգիստ մընալ, որովհետև նա ինքը գրքի առաջին երեսներում ասել է. «բայց այստեղ, իմ գործառնութեան սկզբին ես պէտք խոստովանեմ, որ ժամանակակից մարդերիս դժուար է անպղտոր տեսութեամբ կշռել իրողութիւնները, որովհետև, շատերը մեզանից յափշտակված են իրանց սեփական պատկերով ու մեծութենով, հետևաբար և մտածում են փոխել առասպելական նարկիզ ծաղիկ, և, եթէ այդ սրանց անկարելի է, աշխատում են որ և ուրիշները չը փոխվեն կամ փոխվեն փուշ։ Գիտեմ, և այսօր կան մեր աշխարհում հայեր, որ ման են գալի դիւցազնական Վարդանի սաղաւարտով կամ առաքելոց մարգերի դէմքով, բայց ժամանակը ցոյց կը տայ որ դրանք կրկէսի խեղկատակներից աւելի չեն և որոնում են ծիծաղաւէտ ամբոխի ծափահարութիւնը»։

Այս րոպէիս ստացանք «Մշակ» լրագրի 89 համարը, որի մէջ դուք, որպէս անկեղծ հրապարակախօս, յայտնում էք ձեր կարծիքը պ. Շահազիզեանի գրքի մասին։ Մեր տպաւորութիւնը այնքան քաղցր է և բաւականացուցիչ, որ միայն կարող ենք պատուել և սիրել ձեզ։

Կարդացողներից մին

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Դօկտօր Ա. Արծրունի հաղորդում է մեզ Բեռլինից հետևեալը. «Շուտով այստեղից ուղևորվելու է Կովկաս նշանաւոր աւստրիական նկարիչ պ. Ջիչի, որ արդէն ամբողջ Ռուսաստանին յայտնի է իր գեղեցիկ նկարներով, որոնցով պատկերազարդ դարձրեց ռուս բանաստեղծ Լերմոնտովի գեղեցիկ գրուածները։ Ջիչիի հետ ճանապարհորդելու է դէպի Կովկաս, ինչպէս ինձ պատմեցին, մի երիտասարդ ռուս աղջիկ, նրա աշակերտուհի, որին աւստրիական նկարիչը իր աշակերտներից ամենանշանաւորն է համարում»։

—

«Голосъ» հաղորդում է՝ որ այս օրերս դարձեալ կալանաւորվեցան Ս. Պետերբուրգում մի քանի անձինք, որոնք ծառայում են նաւատորմի մէջ։

—

Վիէննայի «Presse» լրագրին Րօստով (Դօնի վրա) քաղաքից հաղորդում են որ այդ քաղաքի մէջ ցրված են եղել սօցիալիստական պրօկլամացիաներ, որոնց մէջ յեղափոխականները հրաւիրում են ռուս բանւորներին այսուհետև հանգիստ թողնել հրէաներին և սկսել ջարդել հարուստ ռուսներին։

—

Յունիսի 1-ին, երկուշաբթի օր կատարեալ մրրիկ էր Թիֆլիսում։ Ժամը 1-ին կէսօրից յետոյ վեր կացաւ քամին և գնալով սաստկացաւ մինչև ժամի 4-ը, թոզով լցնելով ամբողջ քաղաքը։ Այնուհետև կարկտախառն անձրև եկաւ։ Քամու ժամանակ կոտրվեցան տների մի քանի պատուհաններ, մագազինների մի քանի դռներ, այգիներում ծառերի առաջին ճիւղեր։

—

Երևանից, օր. Ֆ. Տէր-Խաչատրեան հաղորդում է մեզ որ ունի թարգմանած հայերէն լեզուով «Пестрая книжка» վերնագրով գրքոյկը, գործ Ֆ. Հօֆմանի և շուտով դիտաւորութիւն ունի տպագրել այդ իր թարգմանութիւնը։

—

Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Պ. Կարապետ Բէլախեանցի և պ. Օրբէլ Օրբէլեանցի մասնաւոր ուսումնարանում կատարվող հակամանկավարժական մանրամասնութեանց դէմ երբ վերջերումս «Մշակ» լրագրում մի քանի անախորժ լուրեր ու յօդուածներ տպվեցան, յիշեալ ուսումնարանատէր պարոնները այդ լուրերը իրանց ուսուցիչ Ալէքսանդր Արարատեանցին վերագրելով, հրաժարվեցին նրան վճարել ամսական վարձը իր աշխատութեան համար։ Այն ժամանակ պարոնը գանգատվեց հաշտարար դատաւորին, որ գործը քննելուց յետոյ, վճռեց 83 րուբլ առնել ուսումնարանի տէրերից և տալ Արարատեանցին։ Պարոնը հաշտարար դատարանում բացատրեց թէ ինչպէս այդ դպրոցը մի առևտրական բաց կրպակ է, թէ ինչպէս խաբում են վարժապետներին և յետոյ ամսական շատ շատ 10 րուբլ են տալիս և այլն։ Ո՞րքան յետ է մնացած Թիֆլիս, որ Օրբէլեանի պէս մարդը, որ ոչ մի տեղ կրթութիւն չէ ստացած և Բէլախեանցի կօշիկները սրբելով է կրթվել ու լուսաւորվել (նա Բէլախեանցի ծառայ է եղել) ազգային խմբագրութիւնների և դպրոցական վերատեսուչների քթի տակին համ վարժապետ է, համ ուսումնարանատէր և հարիւրից աւելի երեխաներ փչանում են նրա ձեռքի տակ»։

—

Մինչև այժմ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը մեզ ոչինչ չէ պատասխանում այն լուրի մասին, որ այդ դպրոցի գանձարանում կորել է 3,000 րուբլ։ Այդ լուրը մենք չենք հընարել, նրա մասին խօսում էր ամբողջ քաղաքը, նախ քան մենք գրէինք. մեր պարտաւորութիւնն էր յարուցանել խնդիրը, նրան բացատրել տալու և հասարակական կարծիքը հանգստացնելու համար։ Դա մամուլի պարտաւորութիւնն է։ Եթէ պ. պ. հոգաբարձուները մեզ ոչինչ չեն պատասխանի այդ շաբաթվայ ընթացքում, մենք ստիպված կը լինենք հրատարակել այդ լուրը մայրաքաղաքի ռուս լրագիրներում և կը յիշենք թէ ովքեր են դպրոցի հոգաբարձուները։ Թող իմանան պարոնները, որ նրանց չէ սազում Էջմիածնի պէս լուռ մնալ, երբ հասարակութիւնը նրանցից հաշիւ է պահանջում։ Մենք միշտ միջոց ունենալով գրել մայրաքաղաքի ռուս լրագիրներում, մինչև այժմ խնայում էինք Էջմիածինը իր փողի հաշիւներով, բայց մի որ և է Ներսիսեան դպրոցի հոգաբարձուներին խնայելու չենք։

—

«Кавказскій Курьеръ» լրագրում կարդում ենք հետևեալը պ. Թոխմախեանի դասախօսութեան մասին։ «Չը նայելով դասախօսութեան առարկայի հետաքրքրութեանը, քիչ ժողովուրդ հաւաքվեցաւ. այն ինչ, կարելի է ասել, որ այդ դասախօսութիւնը արժէր որ ուշադրութեամբ լսէին այն բոլոր հայերը, որոնց մէջ մնացել է սիրոյ և համակրութեան կայծ անգամ դէպի իրանց բազմաչարչար հայրենի երկիրը։ Դասախօսի ամբիոնի վրա բարձրացաւ մի համեստ, բայց խելօք, ուշադիր, գիտող, Վան քաղաքի բնակիչ մի բարեխիղճ երիտասարդ, լուսաւորված կեանքի փորձերով։ Դասախօսութեան բովանդակութիւնը կազմում էր գլխաւորապէս Վանի նահանգի ազգաբնակութեան տնտեսական և ստատիստիկական դրութիւնը, բայց մանաւանդ հայերի, և ապա հայ հասարակ ժողովրդի բարոյական և ինքնաճանաչական մակերևոյթի ընդհանուր տեսութիւնը։ Այդ դասախօսութիւնը բովանդակութեամբ շատ հարուստ էր։ Թոյլ չենք տալիս մեզ կարճ յօդուածում թւել այն բոլոր խնդիրները, որոնց վրա ուշադրութիւն էր դարձնում դասախօսը,—խնդիրներ, որոնք շատ նորաձև էին, խոշոր, թէպէտ և սեղմված, բայց որոնց գեղեցիկ կերպով պարզեց դասախօսը, շնորհիւ իր բազմակողմանի, անմիջական և մօտիկ ծանօթութեան դասախօսութեան առարկայի հետ։ Մենք, այնու ամենայնիւ, պէտք է կանգնենք նրա ամենագլխաւոր կէտերի վրա։ Պ. Թոխմախեանը իր ձեռք բերած ստատիստիկական ճիշդ թւանշանների հիման վրա պարզեց, որ Վանի նահանգի ազգաբնակութիւնների մէջ տիրապետող տարրը հայերն են, որոնք պատմական յեղափոխութիւններով և հնագիտական յիշատակարաններով այդ հարուստ երկրի միակ ապատարանն են կազմում։ Առևտուրը և արհեստները բոլոր ձեռակերտ և երկրագործական արդիւնաբերութիւնը բացառապէս հայերի ձեռքումն են, և այս պատճառով, նրանցից կախումն ունեն տեղային ազգաբնակութեան բոլոր մնացած տարրերը։ Դասախօսը ցոյց տուեց հասարակութեանը Վանի նահանգի հայերի ձեռագործ զանազանակերպ բրդեայ կտորների բաւական հարուստ հաւաքածու, որոնք նշանաւոր էին իրանց գեղեցկութեամբ և օրինակելի լաւ յատկութեամբ, և որոնք Կ. Պօլսում մրցում են եւրոպական գործարանների արդիւնահանութեան հետ։ Դասախօսի խօսքերով, միակ սիւնը, որի վրա հիմնված է հայ ժողովրդի գոյութիւնը,—ոչ եկեղեցին է, ոչ հայ ինտէլիգենցիան, բայց հայ գիւղացին է, նրա կոշտացած ձեռքերը, որոնցից մենք երեսները շուռ ենք տալիս, բայց որոնք համբերութեամբ տարան ճակատագրի ամենամեծ փոփոխութիւնները, պատմական և տնտեսական աւերող յեղափոխութիւնները,—և որոնք դեռ ևս շարունակում են պաշտպանել ազգային հպարտութեան ինքնաճանաչութիւնը։ Քիւրդերը, պ.